ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Խաչատուր Մելիքսեթյանը

Ս.թ. հունիսի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Խաչատուր Բորիսի Մելիքսեթյանը:

2000 թ.-ին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2001-2010 թթ.-ին նա եղել է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, 2010 թ.-ից մինչ այժմ՝ ինստիտուտի հիդրոքիմիայի լաբորատորիայի վարիչ, 2012-2017 թթ.-ին՝ ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, 2017 թ.-ից մինչ օրս՝ ինստիտուտի տնօրեն: 2018 թ.-ին ինստիտուտում ստացել է երկրաբանական գիտությունների դոկտորի կոչում՝ երկրաբանություն մասնագիտացմամբ:

Խաչատուր Մելիքսեթյանը Եվրոպայի երկրաբանական գիտությունների միության, Երկրագնդի ընդերքի քիմիայի և հիդրաբանության միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի երկրաքիմիական ասոցիացիայի և Օբսիդիանի ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի անդամ է: Նա հեղինակ է 3 մենագրության և գիտամեթոդական ձեռնարկների, շուրջ 54 գիտական հրապարակումների, որոնցից 24-ը՝ «Web Of Science» շտեմարանում ընդգրկված պարբերականներում, 17-ը՝ գրախոսվող պարբերականներում և ժողովածուներում, 13-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ներառված պարբերականներում: Գիտական զեկույցներով հանդես է եկել 60 միջազգային գիտաժողովներում:

Խաչատուր Մելիքսեթյանը ներկայացրեց 2017-2022 թթ.-ին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում կատարած աշխատանքները և ինստիտուտի զարգացման ծրագիրը: Մասնավորապես նրա պաշտոնավարման ընթացքում՝ 2017-2018թթ.-ին ինստիտուտում մշակվել է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հավանականային գնահատման նոր քարտեզը, 2019-2020թթ.-ին մշակվել է «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթուղթը, 2020-2021 թթ.-ին հիմնավորվել են Հայաստանում առաջին «Գեոպարկ»-ի ստեղծման նախադրյալները, 2021 թ.-ին մեկնարկել է «Երկրաջերմային էներգետիկ ռեսուրսների գնահատումը Հայաստանում» գիտահետազոտական նախագիծը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ գիտությունների ազգային ակադեմիայի PEER Science-ի կողմից:

«2022-2027 թթ.-ի մեր զարգացման ծրագրի հիմնական նպատակն է գիտական և աշխատանքային ներուժի պահպանումն ու նրա հետագա զարգացումը, երիտասարդ կադրերի պատրաստումը: Երկրաբանական ուսումնասիրություններում կարևոր նշանակություն ունեն ինստիտուտի միջազգային դիրքը և հեղինակությունը, ինչն արտահայտվում է Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Իրանի, Թայվանի, Բելգիայի, Չինաստանի առաջատար գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող հետազոտություններով:

Նա նշեց, որ ինստիտուտի առաջնային խնդիրներից է առաջիկայում Հայաստանի Հանրապետության տարածքի նոր երկրաբանական քարտեզի ստեղծումը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին